ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի փետրվարի 10-ից 12-ը

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Էդվարդ Հովհաննիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, փետրվարի 10-ից 12-ը

4. Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայության միջև համագործակցության ընդլայնման հարցերի քննարկման, ինչպես նաև Ռուսաստանի հարկային վարչարարությունում առաջադեմ թվային տեխնոլոգիաների կիրառման փորձին ծանոթանալու նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ ՊԵԿ և ՌԴ դաշնային հարկային ծառայության միջև համագործակցության ընդլայնման հարցեր, դիտարկվել են Հայաստանի և Ռուսաստանի հարկային վարչարարությունում կիրառվող առաջադեմ թվային տեխնոլոգիաների, պետության և բիզնեսի միջև թվային փոխգործակցության կառուցման շուրջ փորձի փոխանակման հնարավորությունները: Մասնավորապես, այցի ընթացքում կողմերը փոխանակվել են ապրանքների հետագծելիության ազգային համակարգերի ստեղծման ոլորտում ՀՀ ՊԵԿ և ՌԴ հարկային ծառայության փորձով: Համակարգերը մշակվում են ԵԱՏՄ միջազգային պայմանագրի շրջանակում և կապահովեն հարկային ու մաքսային վարչարարության միասնական մեխանիզմի ստեղծումը: Համակարգերը ավտոմատացված ռեժիմով կբացահայտեն այն ապրանքները, որոնց մասով չեն վճարվել հարկային ու մաքսային վճարները, ինչպես նաև կհայտնաբերեն

անբարեխիղճ հարկատուներին: Հետագծելիության մեխանիզմը հիմնված է հարկատուների միջև պարտադիր էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության՝ հետագծելիության վավերապայմանները պարունակող հաշիվ-ապրանքագրերի վրա:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Կայացել է հանդիպում Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայության ղեկավար Դանիիլ Եգորովի հետ, որի ընթացքում քննարկվել է ԵԱՏՄ շրջանակում փոխադարձ առևտրում ապրանքների շրջանառության ֆիսկալ մոնիթորինգի միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծումը, որի ձևավորման նպատակներն են ԵԱՏՄ-ում փոխադարձ առևտրում ապրանքների շարժի թափանցիկության և անուղղակի հարկերի վճարման ամբողջականության ապահովումը, ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի ավտոմատ հաստատումը, ԵԱՏՄ-ում փոխադարձ առևտրի մասնակիցների թվային նույնականացման ներդրումը, հարկային վարչարարության կատարելագործումը՝ իրավական նշանակություն ունեցող ֆիսկալ տեղեկությունների փոխանակման միջոցով, հարկ վճարողների համար էլեկտրոնային ծառայությունների ընդլայնումը: Ֆիսկալ մոնիթորինգի համակարգի ներդրման սկզբնական փուլում Հայաստանն առաջարկել է Ռուսաստանին ներդնել և գործարկել մեխանիզմի պիլոտային ծրագիրը:

Հանդիպման ժամանակ քննարկվել են նաև հարկային վարչարարությունում առաջադեմ թվային տեխնոլոգիաների կիրառման հետ կապված հարցեր: Նշված հարցերը քննարկելիս Ռուսաստանի և Հայաստանի հարկային մարմինների ղեկավարները փոխանակվել են երկու կառույցներում կիրառվող ՀԴՄ-ների օգտագործման ավտոմատացված կառավարման համակարգերի զարգացման փորձով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց ապրանքների հետագծելիության վերաբերյալ երկկողմ պիլոտային ծրագրի իրականացման հետ կապված, որն իր հերթին կնպաստի ԵԱՏՄ տարածքում ապրանքների հետագծելիության միասնական համակարգի ստեղծմանը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպման արդյունքում որոշվել է ստեղծել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության զարգացմանն ուղղված աշխատանքային խումբ և համապատասխան պիլոտային ծրագրի իրականացման համար մշակել առաջարկություններ: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը հնարավորություն է տալիս կրճատել ծախսերը և հիմք է ստեղծում անտեսանելի հարկային վարչարարության համար:

Հանդիպման ավարտին ՀՀ ՊԵԿ-ի և ՌԴ դաշնային հարկային ծառայության ղեկավարները կարևորել են Հայաստանի և Ռուսաստանի հարկային մարմինների միջև հետագա փոխգործակցության անհրաժեշտությունը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN EDVARD 2001830505

16.02.2021թ.